



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

ՀԱԿՑԵՄ Կենսկոմի 3-րդ պլենումի  
բանաձեվերը յեզ վորումները

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ - 1930



ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ


ՀԿԸՄ2(Կ7.925)

Ն:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

A 3716

ՀԱԿՑԵՄ ԿԵՆՏԼՈՎԻ Յ-րդ պլենումի  
բանաձեվերը յեվ վորուստները



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ - 1930

Հրատ. № 1285

Գրառեալ. № 5082(բ). Պատվ. № 431. Տիվաճ 3000

---

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

Բանաձեվ՝ ընդունված ընկ. Գուրգեն Գրիգորյանի գելուցման առքիվ ՀԼԿՑԵՄ Կենտկոմի բյուրոյի գործունեյության մասին

1. Նսխընթաց տնտեսական տարին հանդիսացավ մեծ բեկման տարի սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում Յերկրի արտադրական ուժերի հսկայական վերելքը, նոր գործարանների կառուցումը և գոյություն ունեցողների ընդարձակումը, համատարած կոլեկտիվացման անցնելը և նրա հիման վրա կուլտակության՝ վարպես դասակարգի՝ վերացումը և աջ ոպպորտունիզմի սանձարձակ իդեոլոգների գաղափարական քաղաքական դինաթափումը բնորոշում են հնդամակի առաջին տարին:

Հնդամյակի 2-րդ տարում մեր յերկրի տնտեսական կյանքը զարգանում և սոցիալիզմի բուռն աճման, քաղաքի և գյուղի աշխատավորական մասսաների ստեղծագործական յեռանգի և ակտիվության, պրոլետարիատի կուսակցության հիմնական գծից կատարվող թեքումների և դասակարգային թշնամու դեմ մըզած սրված անհաշտ պալքարի նշանով:

Սոցիալիզմի զարգացման ճանապարհին գտնվում են մեծադույն դժվարություններ, փորոնց հաղթահրումը հնարավոր և այն պայմանով, ինթե ել ավելի մեծ չափերով բարձրացվի ամբողջ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ստեղծագործական յեռանգը, և ոլրութարիատի ու նրա կուսակցության կողմից խիստ պայքար մղվի դասակարգավին թշնամու և նրա ամեն գույնի ու յերանգի կուսակցությունների, մանքութուական իդեոլոգիաների

դեմ՝ կուսակցության և կոմյերիտմիության շարքերում, տատանումների և թեքումների, առաջին հերթին աջոպղորտունիզմի և հաշտվողականության դեմ, վորպես մեր դարգայսման տվյալ ետապի գլխավոր վըտանգի:

2. Այս խնդիրների լույսի տակ հնգամբակի թե առաջին և թե լերկրորդ տարում մորիլիզացիալի յերենթարկվել կոմյերիտմիության մասսաների ակտիվությունը, նախաձեռնությունն ու ստեղծագործական ենտուղիազմը: Պլենումը մատնանշում ե, վոր հայաստանի կոմյերիտմիությունը, կուսակցության դեկավավությամբ, այդ ժամանակաշրջանում մի շարք նվաճումներ ե ձեռք բերել հնգամյա պլանի իրականացման գործում: սոցիալիստական մրցության կազմակերպման և ծավալման նախաձեռնությունը, հարվածալին բրիգադների կազմակերպումը, կոմյերիտմիության անվան տրակտորային կուննայի հիմնումը, մասսայական շաբաթորյակների կազմակերպումը, հարվածային բրիգադներից հարվածալին արհեստանոցներին ու գործարաններին անցնելը (Լենինական, Յերևան), գործալքումների նշանակալի կրծատումը, կոլտնտեսական շինարարության մասնակցելը, հոկտեմբերյան շաբաթորյակների և բամբակի շաբաթորյակների կազմակերպումը (Յերևան), ակտիվ մասնակցությունը հացամմթերումներին, ինդուստրիացման փոխառությանը, բանվորների և բատրակների մասսայորեն առաջ-քաշումը, կադրերի պատրաստման խընդիրներին մասնակցելը և այլն:

Յերիտասարդության գաղափարական-քաղաքական դաստիարակության խնդիրների հետ կապված բո-

լոր այդ ձեռնարկումները վկալում են, վոր աճել և կոմիտամիութիւն և բանվորա զյուղացիական յերիտասարդութիւն քաղաքական ակտիվությունը և ուժեղացել լե բարարդութիւն մտանակցութիւնը յերկրի տնտեսական շինարարությանը:

3. Սակայն այս հաջողություններն ու նվաճումները պլենումը համարում ե անբավարար և մատնաշում ե, վոր բջիջների և Լիթել ստորին կազմակերպությունների մի նշանակալի մասը չափաղանց դանդաղ և վերակառուցում իր աշխատանքը սոցիալիստական շինարարութիւնն աշխատանքի տեմպին համապատասխան, վորի հետևանքով կոմիտամիութիւնն աշխատանքի և զեկավարութիւնն տեմպը յետ և մնում սոցիալիստական շինարարութիւնն նոր խնդիրներից: Իսկ այն միջավայրը, վորում մենք ապրում ենք, ընորոշվում ե գասակարգալին պայքարի սրումով, հակակոմմունիստական խմբակների ու կազմակերպությունների գործունելության աշխատացմամբ:

Այսպիսի յետամնացությունը հղի լե մեծ վտանգներով, վորովհետեւ, յիթե կոմիտամիութիւնն կազմակերպությունները մնան սոցիալիստական շինարարութիւնն արագ տեմպի պոչին, ձեռք չըերեն հեղափոխական պատշաճ տեմպ և թափ իրենց աշխատանքներում, ապա նույնիսկ քաղաքական ձեականորեն ճիշտ գծի գեպքում մեր առաջ կկանգնի զեպի ոպպորտունիզմը սայթաքելու վտանգը»:

4. Յերկրի տնտեսական և քաղաքական իրադրությունը պահանջում ե աշխատանքի նոր պայմաններ, սոցիալիստական շինարարութիւնն նոր տեմպ, Յետ չմնալ այդ տեմպից, մորիլիղացիալի յենթարկել

աշխատավոր լերիտասարդության նախաձեռնությունն  
ու ակտիվությունը, վճռականապես ամբողջ մասսալով  
շրջադարձ կատարել գեղի լերկը տնտեսական և կուլ-  
տուրական շինարարությունը՝ մեր միության գործու-  
նելության լուրացանչը քայլը լենթարկելով հըն-  
դամյա պլանի արագ կատարման խնդիրներին, խըս-  
տորեն զգաստացնելով յետամաց ողակները, ըմբռնել  
սուղղծված քաղաքական իրազըռությունների բոլոր  
գլխավոր առանձնահատկությունները, չկորցնել հե-  
ղափոխական վճիռ հեռանկարները, ծավալել բայց կե-  
կլան ինքնաքննադատությունը, բոլոր այդ ձեռնար-  
կությները շաղկապել յերիտասարդության գաղափարա-  
կան-քաղաքական դասակարգավիճ դաստիարակության  
խնդիրներին՝ մի կողմից, ամբապնիել միության պրո-  
լետարական կորիզը և զհկավարությունը, անողոք  
պայքար կազմակերպել ընդդեմ լենինիզմից կատար-  
վող թեքությների, ազգայնական տհնդենցներին և տրա-  
մադրություններին հակադրել իսկական ինտերնացիո-  
նալիստական դաստիարակություն, բարձրացնել միու-  
թենական զեկավարության և ակտիվի պատասխանա-  
տվությունը, խրախուսել և գլխավորել ներքեմից յե-  
կող միութենական մասսաների ինքնաքննադատու-  
թյունն ու ինքնազործունելությունը՝ մյուս կողմից.—  
որանք են ահա այն հիմնական խնդիրները, վոր դըր-  
ված են Հայաստանի կոմիտեի միության առաջ հըն-  
դամյակի 2-րդ տարում:

5. Վորպես գործնական ձեռնարկությունը՝ յեր-  
կըի անտեսական շինարարության մեջ կումերիտմիու-  
թյան մասնակցության ասպարիզում, պլենում առա-  
ջամյակի 2-րդ տարում և,

ա) ՀԵԿՑԵՄ կոմիտեների և բջիջների աշխատանքների մեջ վճռական բեկում առաջացնել նրանց գործնական մասնակցության տհասակետից՝ տնտեսական շինարարության գործում։ Լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը, բարձրացնել լուրաքանչչուր բջիջի, լուրաքանչչուր կոմյերիտականի պատասխանատվությունը սոցիալիստական մրցության պայմանագրերի կատարման նկատմամբ։ Դիխովին ընդդրկել կոմյերիտականներին հարվածային բրիգադներում, հարվածային բրիգադներից անցնել հարվածային արհեստանոցների, հանքահորերի, ֆաբրիկաների և գործարանների։

բ) Կաղմակերպել ֆաբրիկների, գործարանների, հանքահորերի և արհեստանոցների արտադրական ծրագրերի քննությունը և նրանց կատարման կոնտրոլը։ Հրավիրել բանվոր բերիտասարդության առանձին ժողովներ, կոնֆերենցիաներ, հարվածայինների և «Փերեկ հեծելազուր»-ի խմբակների հայլաքներ արտփինովանների կատարման խնդիրների շուրջը, կաղմակերպել հարվածային բրիգադներ, սոցիալիստական մրցության պայմանագրերի կատարում, գյուտարարության գործը և այլն։

գ) Սիստեմատիկ կազմակերպել սոցիալիստական մրցության և հարվածային բրիգադների գաղափարի պրոպագանդան, գործնականապես անողոք պայքար կաղմակերպել պոկողական արամագրությունների դեմ, պայքար արտփինովանների թերակատարման դեմ, հանուն արտադրանքի վորակի բարելավման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, բրակի քչացման, ինքնարժեքի իջնցման և այլն։ Աշխա-

տանքի և պայքարի կոնկրետ ալս որինակներով ու փաստերով դնել յերիտասարդության արտադրական դասակարգալին դաստիարակության, առանձնապես արտադրության մեջ նոր յեկածների արտադրական դասակարգալին դաստիարակության գործը:

դ) Կազմակերպել յերիտասսրդության մասսայական շարժում հանուն տեխնիկական անդրադիտության վերացման, յուրաքանչյուր բջիջի առաջ խնդիր դնել կազմակերպելու տեխնիկական ուսցինալացման խմբակներ, խորհրդատվություն, հեռակա ուսուցում, դասախոսություններ և ղեկուցումներ ճարտարապետների, տեխնիկների միջոցով և այլն: Այս խնդրում «ուրական մեկ ժամ տեխնիկական ուսուցման» լոգունը պետք է յուրացնեն կոմիերիտմիության կազմակերպությունները, վորպես մարտական մի պահանջ: Մասնավորապես պլենումն առաջարկում է Յերևանի, Լենինինականի, Ալլահվերդու և Ղափանի կոմիտեներին կարճ ժամանակամիջոցում մատնանշված իմաստով կազմակերպել բանվոր յերիտասարդության տեխնիկական կրթության գործը:

ե) Պլենումը հանձնարարում է Կենտկոմին ամենամբարձագույն մորիլիկացիալի յենթարկել 300 տոկուն, իդեոլոգիապես ամուր կոմյերիտականների և տեղափոխել Անի-պեհմզա և Արթիկ-տուֆ:

6. Զնայած կոմյերիտմիության հիմնականում ունեցած ճիշտ դիրքին կոլտնահսական մասսայական շարժման մեջ, այնուամենայնիվ միության առանձին ողակներում տեղի է ունեցել շեղում կուսակցական գծից: Այդ շեղումը գլխավորապես արտահայտվում է նրանով, վոր համատարած կոլեկտիվացումը կիրառելիս հաշվի չեն առել այն առանձնահատկությունները

և կոնկրետ պայմանները, վորի մեջ գտնվում ե տը-  
վյալ շրջանը, նկատի չի առնվել, վոր առանձին յե-  
տամբաց շրջաններում ոգոյություն ունեն կիսաչքա-  
վորական տնտեսության և կալվածատիրական ֆեո-  
դալական հարաբերությունների մնացորդներ, վոր տեղ-  
տեղ պահպանվել են տոհմական հարաբերություննե-  
րի մնացորդներ, վոր կրօնական ֆանատիզմի և ազ-  
գալին մեկուսացված վիճակի տարրերը զեռ ամենու-  
րեք բավարար չափով վերացված չեն: Տեղի յեն ու-  
նեցել մերկ ապակուրակացման, քանակի յեռեկից ընկ-  
նելու և գործնականում ոպապորտյունիստական վար-  
մունքի փաստեր: Կենտկոմի պլենումն ամբողջ կազ-  
մակերպության ուշադրությունն ե հրավիրում այդ  
թերությունների վրա և առաջարկում ե.

ա) Այդպիսի յետամբաց շրջաններում անհրաժեշտ  
և նախ և առաջ գործնականապես ոգնել կուսակցու-  
թյանը վոչնչացնելու կալվածատիրական ֆեոդալական  
հարաբերությունները և առավելագույն չափով սահ-  
մանափակել կուլակության շահագիտուկան միտու-  
ները: Այդ շրջաններում կոմիերիտական կազմակերպու-  
թյունները պարտավոր են առավելագույն չափով ոգնել  
կուսակցության տեղական կոմիտեներին ու բջիջներին  
ուժեղացնելու աշխատանքը բարարակության և չքավոր-  
ների մեջ չամ կ (ը) կ կենտկոմի գիրեկտիվի հիման  
վրա: Այդ շրջաններում գոլություն ունեցող կուտա-  
սություններն, ինչպես և կոլեկտիվացման հասարակ  
ձևերն ու նրանց հետագա կազմակերպությունը պետք  
է զրվի այնպիս, վոր նրանք որինակելի ցուցադրա-  
կան ընուլիթ ունենան և նախադրյալ հանդիսանան  
համատարած կոլեկտիվացումն իրագործելու համար:

բ) Կուսակցության քաղաքականությունը կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու վերաբերալ անհրաժեշտ և ամենավճռական կերպով կիրառել, այդ անխզելի կապի մեջ պահելով և հենվելով համատարած կոլեկտիվացման և բատրակության, չքավորության ու միջակության մասսաների ակտիվության վրա:

Այստեղ պետք և անխնայորեն հարվածել ոպերատունիզմի և հաշտվողականության բոլոր արտահայտությունները ոլրակտիկայում։ Պետք և անողոք պայքար կազմակերպել ընդդեմ առանձին միջակների շահերի վոտնահարման, ապակուլտակացման իրադորձման պրոցեսում։

գ) Գլխավոր ուշադրություն դարձնել կոլտնտեսությունների ամրապնդման և նրանց ներքին կյանքի կազմակերպման վրա։ Ակտիվորեն մասնակցել և սգնել կոլտնտեսությունների արտադրական ծրագրերը կազմելուն, աշխատանքի և գնահատությունների կազմակերպման և այլն։ Ամրող միության ուշադրությունը հրավիրել նրանց թույլ մասնակցության վրա դարնան գյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստական աշխատանքներին, չղանդաղեցնելով նաև խորհրդային ամրող հասարակայնության ուշադրության ներգրավումը նախալառաստական աշխատանքների մեջ առաջացած ճեղքածքների և նըստանց արագ վերացման վրա։

դ) Լարել գյուղխորհուրդների ուշադրությունը գյուղատնտեսական կամպանիայի, կոլտնտեսական շինարարության կազմակերպման, նրա գլխավորման և նրանց շինարարության վրա։ Կոմյերիտմիությունն

անպայմանորեն պետք և ողնի գլուղխորհուրդներին վերակառուցելու նըանց աշխատանքը։ Պլենումը հանձնաբարում և կենակոմի բլուրոյին մոտ ժամանակներս հրավիրել գլուղխորհուրդների անդամ կոմիերիտականների հանրապետական խորհրդակցություն, ուր մշակել կոմյերիտմիության աշխատանքի կոնկրետ ձեռնարկումները զյուղխորհուրդներում։

7. Մատնանշելով իդեոլոգիական ֆրոնտում կազմակերպության ձեռք բերած հաջողությունները, պլենումն, այնուամենայնիվ, զրանք համարում և անբավարար և գտնում են, վոր այսորվա սոցիալիստական ուկոնստրուկցիայի պայմաններում, Անդրկովկաստոն Ֆեղեր սցիայի զարգացման նոր ետապի պայմաններում անողոք պալքարը յերկու ֆրոնտում, պալքարը հակակոմմունիստական կուսակցությունների ու ազգայնականության զեմ պետք են, ինչպես և առաջ, հանդիսանա կոմյերիտական յուրաքանչյուր կազմակերպության ուշադրության կինտրոնը։ Անհրաժեշտ են՝

ա) Հետապայում ուժեղացնել և խորացնել վճռական պալքարը յերկու ֆրոնտում ընդդեմ աջ թեքանչ վորպես տվյալ ետապի գլխավոր վտանգի Բուխարինի, աջ ասածնորդների խմբակի կապիտուլյացիային պետք և հաջորդի աջ ուղղողիցիալի մանր-բուրժուական ելության հետագա վճռական մերկացման ուժեղացումը։ Աջ ուղղորդումնիզմի հաղթահարումը գործնականությունը նրա բոլոր բազմատեսակ արտահայտությունների մեջ, պետք և հանդիսանա Միության յուրաքանչյուր բջիջի մարտական խնդիրը։

«Զախ» Շագկինի, Ստենի, Կոստրովի, Բոբրիչչկի հրաժարականը և իրենց սխալների խոստովանումը

առանձնապես պետք և ընդգծվեն միության մեջ՝  
պայքարելու համար «Ճախ» խոտորումների դեմ գործ-  
նականում և տրոցկիստական տրամադրությունների  
կրկնության դեմ Կոմիերիտմիության մեջ:

բ) Հակակոմմունիոտական կուսակցությունների  
(դաշնակներ, մենշեփկներ, մուսավալաթիստներ) աշխու-  
ժացումը և նրանց շառավիղ դաշտումովի, յերիտասարդ  
մարքսիստների աշխուժացումը մեր առաջ խնդիր և  
դնում ավելի ևս ուժիղացնելու մեր անհաջտ պայքարը  
նրանց դեմ և վճռականապես մերկացնելու և բացա-  
տրելու յերիտասարդական լայն մասսաներին նրանց  
հականեղափոխական ելությունը։ Դրա հետ միասին ան-  
հրաժեշտ և կոմյերիտական կազմակերպությունների  
ազգեցությունն ավելի ևս ուժիղացնել Միությունից  
դուրս գտնվող յերիտասարդության վրա, ներգրավել  
նրան հասարակական աշխատանքի, հրավիրել առան-  
ձին ժողովներ, խորհրդակցություններ, կոնֆերենցիա-  
ներ և այլն։ Առանձնապես անհրաժեշտ և ուշադրու-  
թյուն դարձնել սովորող յերիտասարդության մեջ աշ-  
խատելու վրա և, միաժամանակ, անհրաժեշտ և ուժի-  
ղացնել պայքարը նացիոնալիզմի բոլոր բազմազան  
արտահայտությունների դեմ գործնականում, ազգայ-  
նականությանը հակադրելով իսկական ինտերնացիո-  
նալիզմը։ Այս խնդրում անհրաժեշտ և ամրապնդել  
կապը արտասահմանի կոմյերիտական կազմակերպու-  
թյունների հետ գրավոր և կենդանի միջոցներով՝ սո-  
ցիալիստական մրցություն և մի շարք այլ ձեռնար-  
կումներ կատարելով։

- 8. Հակակըրոնական ֆրոնտի աշխատանքը դեռ-  
ևս հանդիսանում և մեր աշխատանքի թույլ կողմը.

կոմիերիտական կազմակերպությունները պատշաճ ուշադրություն չեն դարձնում աշխատանքի ալդ ասպարեզի վրա Այս խնդրում անհրաժեշտ և գործնականապես միութենական մասսայի ուշադրությունը, դըլ-խավորապես զյուղական կազմակերպություններում, բեկուկ սիստեմատիկ հակակրօնական պրոպագանդացի վրա:

Պլենումն առաջարկում և կենտկոմի բլուրոյին մեկ ամսում մշակել ձեռնարկումներ ալդ ասպարեզում, այն հաշվով, վոր վճռական բեկում ստեղծվի միության ստորին կազմակերպությունների աշխատանքի մեջ իդեոլոգիական ֆրոնտի տվյալ մասում։

9. Պլենումը, մատնանշելով այն եյտական բեկումը, վոր գոյություն ունի միութենական մասսայի և ակտիվի առաջքաշման ու դաստիարակման ասպարեզում, առաջարկում և հետապայում ավելի ևս ուժեղացնել աշխատանքն այդ գործում, առանձնապես բարձրացնելով գեկավար ակտիվի տեսական և գործնական կվալիֆիկացիան և լենինիզմի պրոպագանդան լերիտասարդության ամենալայն խավերում։

Պլենումը միության ուշադրությունն և հրավիրում այդ ֆրոնտի կարևորության վրա և արտահայտվում է հոգուտ վճռական միջոցներ ձեռք բերելու ընդդեմ թերապնահատության և վախի այն ելեմենտների, վոր գոյություն ունեն միութենական մասսայի առաջքաշման ու դաստիարակման, ինչպես և միության մասսայի զեկավար ակտիվի տեսական մակարդակի պատրաստման խնդրում։

10. Զնալած գոյություն ունեցող քանակական և վորակական հաջողություններին միության աճման

ասպարիզում, այնուամենայնիվ մենք ունենք նվազում կազմակերպության պրոլետարական միջուկի (մեկ տոկոս): Կենտկոմի պլենումը կազմակերպության ուշադրությունն և հրավիրում այդ բացի վրա և միության առաջ խնդիր ե դնում՝

ա) Վճռականապես կինսագործել միության լոգունգը  $100\%-\text{ով}$  խկական բանվորներին և բատրակներին Կոմյերիտմիության մեջ ներգրավելու վերաբերյալ՝ ուժեղացնելով նրանց մեջ մասսայական աշխատանքը, «քերեվ հեծելազորի» աշխատանքներին ներգրավել հարվածային բրիգադները, պարբերաբար հրավիրել խորհրդակցություններ և կոնֆերենցիաներ, բարելավել միության բջիջների մասսայական տնտեսական աշխատանքը, յերիտասարդության իրավական շահերի պաշտպանությունը և այլն:

բ) Դրա հետ միասին ուժեղացնել չքավոր յերիտասարդության լայն մասսաների ներգրավումը, հասնել այնպիսի դրության, վոր գյուղատնտեսական բանվորները, յերիտասարդության բատրակային և չքավորական մասը գերակշռի թե միության և թեղեկավարության մեջ գլուղում:

գ) «Գյուղատնտեսության կոլեկտիվացումը տարբեր ձևով և դնում միջաների ընդունելության խընդիրը Կոմյերիտմիության մեջ։ ԼԿՅԵՄ պետք ե իրշարքերն ընդունի, անհատական ընտրության հիմունքներով, սակավազոր միջակ յերիտասարդության այն մասը, վորը մտել ե կոլտնտեսություն, մյուս մասի վերաբերմամբ պահանջելով, վորակես նախնական պայման, մտնել կոլեկտիվ միավորություններից մեկնումեկի մեջ։

«Կոլտնաեսությունների տմբնապարզ ձևերի մեջ գտնվող միջակ սակավաղոր լիրիտասարդությունն ընդունելիս անհրաժեշտ է առանձին ուշադրությամբ հաշվի տանել յերիտասարդության գերը միավորության մեջ, նախապատվություն տալով նրա այն մասսին, վորը ջանք է թափում պարզ միավորությունները վերածելու կոլտնաեսության բարձր ձևի» (Համ. Լեթե՛Մ կենակոմի պլենումի վորոշումից):

11. Աղջական փոքրամասնությունների մեջ միության աշխատանքի նկատելի աշխուժացումը դեռևս շատ անրավարար է Պլենումը գտնում է, վոր կոմիերիտական կազմակերպությունների ուշադրությունն, աղջական փոքրամասնությունների յերիտասարդության աշխատանքների հետագա ուժեղացման ասպարիզում, պետք է կենտրոնացվի հետեւյալ խընդիրների վրա. ա) ապահովել աղջական փոքրամասնության շրջանները դեկավար աշխատողների կազրերով, բ) պատրաստել և վերապատրաստել աղջական փոքրամասնության ակտիվ՝ հատուկ կուբսերի և սեմինարիաների միջոցով, գ) ուժեղացնել աղջական փոքրամասնության յերիտասարդության ներգրավումը միության և արտադրության, կոլտնտեսության և կոռպերացիալի մեջ և դ) առանձին ուշադրություն դարձնել աղջական փոքրամասնությունների յերիտասարդության կոմմունիստական ինտերնացիոնալիստական դաստիարակության վրա:

12. Բազմական վտանգի և իմպերիալիստական պատերազմի վտանգի ուժեղացումն ընդդեմ ԽՍՀՄ (անցքերը Զ.-Ա. յերկաթուղում, հակախորհրդային կամուանիան ֆրանսիայում և ալլն) պահանջում են

միությունից գլխովին ռազմականացնել իր շարքերը և ուժեղացնել ռազական աշխատանքը միության մէջ ընդհանրապես։ Կոմիերիտականների 100% ով ներգրավումը Պ.Ա.Ը.-Ա.Վիաբիմի, նրա աշխուժացումը, լուրաքանչյուր կոմիերիտականի պատրաստումը ռազմականապես, բոլոր ողակների ռազմականացումը (Փիզկուլտուրա-տուրիզմ, աշակերտություն և այլն), քաղաքացիական կազմակերպությունների կապը դին-վորական կազմակերպությունների հետ պատշաճ ըարձրության վրա դնելը և պայքարը ռազմական աշխատանքի թերագնահատման դեմ—պետք է հանդիսանան կոմիերիտական բջիջների հարվածային խնդիրները։ Մեր զարգացման տվյալ ժամանակաշրջանում ռազմական աշխատանքի թերագնահատումը մոտենում է ուղղորդյունիզմին գործնականում։

13. Միության խոշոր շրջադարձը դեպի տնտեսական ֆրոնտը, դեպի լավ և խոշոր մասնակցությունը սոցիալիստական շինարարության բոլոր պրոցեսներում, ավելի, քան լեռներից, պահանջում են ուժեղացված և բարելավված կուսղեկավարություն կոմիերիտմիության նկատմամբ։

Կուսղեկավարության հետագա ամրապնդման և բարելավման համար կոմիերիտմիության, առանձնապես նրա ստորին ողակների նկատմամբ աղենումը հանձնարարում է կենտկոմի բուրովին ամենակարճ ժամանակամիջոցում գործնական կոնկրետ միջոցներ մշակել և ներկայացնել Հ. Կ. (բ) Կ. կենտկոմի քննության։

Կենտկոմը՝ մատնանշելով և դատապարտելով «Ճախ» տրամադրությունների «ավանդարդիզմի»

գոյությունը միության առանձին ակտիվիստների մեջ կուսդիկավարության խնդիրներում, առաջարկում և Կանոնադրության կոմիտեի միության բոլոր կազմակերպություններին անողոք պարզաբ ծավալել այդ տրամադրությունների և հայացքների կոնկրետ արարադարձությունների գիմ։

14. Մեր զարգացման տվյալ շրջանը պահանջում և ավելի ու ավելի ծավալի բայց էկիզան ինքնաքննադատությունը և ինքնաքննադատության լրազունքը զարձնել միության լուրաքանչյուր բջիջի և կոմիսնելի ամենորյա աշխատանքի մեթոդը։ Միության աշխատանքների աշխատավորմը սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում, նրա մարտունակության հայտաբերումն ու ամրապնդումը, մասրավորապես առանձին ողակներում, աշխատանքի և ղեկավարության ամբողջ սիստեմի վերակառուցումը մեր շինարարության ախորվա տե՛սպի համապատասխան անկարելի լե առանց ինքնաքննադատության հետագա վճռական ծագարման

Պէնումբն արտահայտվում է հոգուտ այն բոլոր  
դեկավար ընկերների անմիջապես հեռացման և միու-  
թյան ըջիշների բյուրոների վերընտրության, վորոնք  
ընդունակ չեն ժամանակին կազմակերպելու միու-  
թյան և չերխտասարդական մասսան՝ կատարելու կու-  
սակցության, կառավարության և միության մարտա-  
կան առաջադրությունները և վերակառուցելու միու-  
թյան աշխատանքն ու նրա աեմպը սոցիալիստական  
շինարարության ահմպին համապատասխան:

ՊԻՌՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Բանաձև՝ ընդունված ընկ. Հ. Թումանյանի հարակից  
զեկուցման առթիվ)

1. Մեր հեղափոխության զարգացման ներկա  
շրջանում, յերբ կառուցվող սոցիալիզմը հաղթական  
արշավի յե անցել է իրկրի կապիտալիստական տարրե-  
քի վրա, յերբ կուսակցությունն անցել ե կուլակին  
վորպես դասակարգ վոչնչացնելու քաղաքականու-  
թյանը համատարած կոլլեկտիվացման րազարի վրա,  
այս պայմաններում ավելի յե սրվում դասակարգային  
պայքարն ու ուժեղանում մեռնող դասակարգերի դի-  
մագրությունն արշավող սոցիալիզմի հանդեպ: Պատա-  
նեկության կազմակերպման, նրա կոմմունիստական  
վերաշակման, աճող սերնդից սոցիալիստական շինա-  
րարության նոր-նոր կազրեր տալու խնդիրն առաջ-  
նակարգ տեղ ե դրափում մեր դասակարգարին պայ-  
քարի ու շինարարության ընդհանուր ճակատում: Այս  
տեսակետից պիոններական շարժման հարցերն իրենց  
ամբողջ հասակով ու սրությամբ դրվում են կուսակ-  
ցության ու կոմյերիտ միության կազմակերպություն-  
ների առաջ:

2. Պիոններական կազմակերպությունը հատկա-  
պես վերջին շրջանում հանդիս է յեկել վորպես ակ-  
տիվ մասնակիցը և ոժանդակողը կուսակցությանը և  
կոմյերիտակությանը իրկրի սոցիալիստական շինա-  
րարության և գլուղի սոցիալիստական վերակառուց-  
ման գործում:

Հալաստանի պիոներ կազմակերպության ակտիվ մասնակցությունը յերկրի սոց. շինարարությանը հանդիսացել է այն կարևորագույն գործերից մեկը, վորը պատանեկան մասսաները համախմբել ե պիոներ կազմակերպության շուրջը, խուսափելով նրա շարքերը զերազանցապես հարազատ սոցիալական խավերից (36,000-ից կազմակերպությունը հասել է 56,000-ի):

3. Պիոներ կազմակերպությունն իր նվաճումների կողքին դեռևս ունի զգալի բացեր, վորոնց շուրջը պետք է բերենալ վոչ միայն պիոներական մասսաների, այլ և կուսակցության և Կոմիերիամիության մասսաների բացառիկ ուշադրությունը:

Ներկայումս տնտեսական, կուլտուրական վերելքի հետ աճում ու զարգանում են յերիխաների պահանջներն ու ակտիվությունը, մյուս կողմից դասակարգային պայքարի ալս սուր շրջանում մեր հակառակորդներն աշխատում են իրենց ազդեցության տակ զցել յերեխաներին: Այս պայմաններում պիոներ կազմակերպության վորոշ ողակները յետ են մնում պատանեկության վրա ամրողական ազդեցություն ունենալուց և չեն կարողանաւ կազմակերպել ուժեղ հարձակողական պայքար դասակարգալին թշնամու վուտնձությունների դեմ:

Չնայած Կոմիերիամիության մի շարք համագումարների վորոշումների՝ Կոմիերիամիության զեկավարությունը պիոներ կազմակերպությունների վրա ուժեղացնելու—ընկում ստեղծելու մասին, մինչև այժը զեկավարությունը մնում է անբավարար դրության մեջ:

Առանձնապես Կոմիերիամիության կազմակեր-

պությունների անբավարար դեկավարությունը տրատահայտվեց կոլվարական ստուգատեսի և մորիլիզացիալի ընթացքում:

Այս աշխատանքների դեկավարման տեսակետից կենտրուկովի դեկավարությունը ևս յեղել և անբավարար: Աշխատանքի այս գժվարին շրջանում պիոններ աշխատանքների դեկավարության ծանրությունը ընկած և մեծ մասամբ պիոններ բլուրոնների վրա: Պատահելության ինտերնացիոն պաստիարակության գործը գեռնեսիր բարձրության վրա չի կանգնած: Պիոններ շարժման աշխատանքների թուլությանը մեծապես նպաստում և դեկավար ակտիվի անհամապատասխան և անվորակլինելը (մասնավորապես կոլվարների կազմը):

Այս դրությունը պահանջում և,

1. Վոր կուսակցության և կոմյերիտմիության կազմակերպությունները (հատկապես ցածր ողակներում) վճռական բեկում առաջ բերեն դեկավարության ասպարիզում: Ագնեն պիոններ կազմակերպություններին կազմակերպել ուժեղ հարձակողական պայքար մեր թշնամիների գեմ և կայուն գործնական հիմքերի վրա դնել պատանեկության ինտերնացիոնալ դաստիարակության գործը նրանք պետք ե ըդրագվեն պիոններ շարժման առանձին կոնկրետ խնդիրներով, առանձնապես պիոններական աշխատողների կադրերի պատրաստման գործով և պիոններ շարժմանը պատրաստի ուժեր տալու ինքրով: Ամեն մի կոմյերիտական բջիջի և կոմիտեի առաջ խնդիր և դրվում ընդհուպ մոտենալ պիոններ շարժման խնդիրներին, պիոններ աշխատանքները դաշտական պարձնել միության աշխատանքների հիմնական առանցքներից մեկը:

2. Կոմիերիտամիությունը պիոներ կազմակերպության հետ միատեղ պետք է զբաղվի նաև յերեխաների իրավունքի և պաշտպանության խնդիրներով, այդ հարցերը քննության առնելով համտպատասխան մարմիններում, ուսումնասիրի և կարգավորի յերեխաների տնտեսական և կենցաղային դրությունը, պայքարի նրանց շահագործողների դեմ, տեղափորի նրանց արհեստանոցներում, ֆարմագունդուներում և այլն:

3. Պիոներ կազմակերպության աշխատանքների, պատանեկանական կոմմունիտական դաստիարակության բարելավման համար Կոմիերիտությունը պիոներ կազմակերպության շուրջը պետք է համախմբի բոլոր այն կազմակերպությունները, վորոնք ընդգրկում են բանվորա-գյուղացիական լայն մասսաները (պրոֆմիություններ, ՊԱԶԸ-Սպիտակիմ, ՄՈՊՐ և այլն) և կազմակերպի նրանց լայն գործնական ոժանդակությունը (վոչ միայն նյութական) պիոներ կազմակերպություններին:

4. Անհրաժեշտ և պիոներ կազմակերպության աշխատանքների ձևերն ու մեթոդներն ամրողապես վերակառուցել, հարմարեցնելով այն կուսակցության և խորհրդակին իշխանության այսորվա խնդիրներին, ըստացնելով այն յերկրի վերակառուցման պահանջներից: Պիոներական կազմակերպությունը սոցիալիստական շինտրարության մեջ պիտի ներդրավի պատանեկության նորանոր հոգարներ, ուղղելով նըրանց ստեղծագործությունը և ինքնազործունելությունը յերկրի ինդուստրիացման, զյուղի կոլլեկտիվացման, կենցաղի սոցիալիստական ձեերին անցնելու ուղիներով՝ առաջադրելով յերեխաներին պարզ և կոնկրետ

ինդիրներ, համապատասխան նրանց ուժերին և կարողություններին:

5. Պիոներ կազմակերպությունը պիտի հանդիսանա հնդամքա պլանի մասսայականացման խոշոր լծակներից մեկը: Հնդամյա պլանի ուսումնասիրությունը, ժողունակության գորգացման խնդիրները պետք ե շաղկապվեն պիոներական կոլեկտիվի աշխատանքներին այնպես, վոր յուրաքանչյուր կոլեկտիվ գործնական աջակցություն ցույց տա հնդամյա պլանի կիրառմանը (տեխնիկական կազդեր տալու խընդուրում, անգրագիտության վերացում, ագրոպրոպագանդա, կուլտուրական հեղափոխության խնդիրներ և այլն):

6. Պատանեկության մեջ տանել լայն ինտերնացիոնալ պրոպագանդա, խելով մանուկներին զանազան հակակոմմունիստական ազգեցություններից (գըպըցում, ընտանիքում, փողոցում): Բենեկ պիոներների ուշադրությունն այս խնդրի վրա, դուրս բերելովիրենց պիոներներին՝ պայքարելու ազգանական և կրոնական տրամադրությունների կոնկրետ արտահայտությունների դեմ: Ավելի ևս խորացնել կապը հարկան հանրապետությունների կազմակերպությունների հետ: Ուժեղացնել տարբեր ազգերից բաղկացած կոլեկտիվների մերձեցումը, իր բարձրության վրա դնելով յերեխաների ինտերնացիոնալ դաստիարակության գործը:

7. Պիոներ կազմակերպության մասնակցությունը գյուղի վերակառուցման ասպարիզում պահանջում ե վերակառուցել պիոներ կազմակերպության աշխատանքները կոլխոզներում, առանձնապես համատրածի շրջաններում: Խնդիր դնել կոլխոզների անկազմա-

կերպ պատանիներին ամբողջովին գրավել պիոներական կազմակերպության մեջ։ Պլենումը հանձնարարում և կենտրոնուրութիւն՝ մշակելու կոնկրետ միջոցառումներ այդ ուղղությամբ։

8. Պիոներ կազմակերպության ազդեցությունը դպրոցի վրա գեռիս բավարար չի։ Անհրաժեշտ է, վոր պիոներ կազմակերպությունը կոմմոնլի ոգնությամբ դրայվի դպրոցական շինարարության խնդիրներով, կարգավորի փորպատճերի, ակումբալին որերի աշխատանքները, ընդգրկելու դպրոցի անկազմակերպ պատանեկությունը պիոներական աշխատանքների շուրջը և տատիճանաբար կազմակերպության մեջ, իր բարձրության վրա գնի գպրոցական շինարարության դործը։ Դպրոցներում և տեխնիկումներում վերջնականապես մտցնել պիոներական ցիկլը։

9. Արձանագրելով պատանեկության կոմմունիտական մամուլի նվաճումները վերջին տարվա ընթացքում թե բովանդակությամբ և թե քանակի տեսակետից («Պիոներ կանչի» տիրամը 20000, «Պիոներդիմ»-ինը՝ 7000), պլենումը միաժամանակ նշում է, վոր պիոներ կենտրուրոն և Պետհրառը լուրջ ուշադրություն չեն դարձրել պատանեկան և ղեկավարող պիոներական զրականության հրատարակության վրա։ Անհրաժեշտ է մանկական և պիոներական ղեկավար դրականության սիստեմատիկ հրատարակման դործի կարգավորում։

ԿՈԼԽՈԶ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ  
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

(Բանաձև՝ ընդունված ընկ. Արշ. Գաստարյանի ղե-  
կուցման առթիվ)

Կուսակցության գլխավոր պիճը՝ լերկրի ինդուս-  
տրիացման խնդիրները կյանքում անշեղորեն կիրառե-  
լու և լենինյան զծից բոլոր թիքումների ղեմ անհաջո-  
պայքար մղելու հետևանքով արդեն ստեղծված և նյու-  
թական բազա կուլակային խոշոր արտադրությունը  
կոլխոզների խոշոր արտադրությամբ փոխարինելու:

Այլ կերպ ասած՝ մենք այսոր կուլակության շա-  
հագործողական տենդենցները սահմանափակելու քա-  
ղաքականությունից անցնում ենք կուլակությունը  
վորպես գասակարգ վերացնելու քաղաքականությանը  
համատարած կոլեկտիվացման հիման վրա: Դյուզի  
կոլեկտիվացման, սոցիալիստական վերակառուցման  
աշխատանքներն ընթանում են կատաղի գասակար-  
գային պայքարի, պրոլետարիատին թշնամի բոլոր  
տեսակի և գույնի ուժերի և իդեոլոգիաների դիմա-  
դրության պայմաններում:

Այս հանգամանքներում կուսակցության և բան-  
վոր գասակարգի առաջ ծառանում են խոշոր կարե-  
իրություն ունեցող խնդիրներ: Կոմսոմոլից՝ վորպես  
կուսակցության լավագույն օգնականից՝ մասսախական  
կոլեկտիվացումը պահանջում է:

ա) Լինել նրա տուաջին շարքերում և նրա լա-  
վագույն պրոպագանդիստը:

բ) Մորիլիզացիայի լինթարկել բոլոր ուժերը

ժամանակին և վճռական ու անշեղ կերպով տանել կուսակցության քաղաքականությունն այդ հարցում:

գ) Ել ավելի համախմբվել կուսակցության գըլ-խափոր գծի շուրջը և կուսակցության ղեկավարությամբ վճռական, բայց եիկական հակահարված տալ դասակարգութին թշնամուն և նրա կուսակցությունների (Դաշնակցություն, մենշենիկներ, Մուսավաթ) բոլոր փորձերին, վորոնք աշխատում են ձախողել կու-լիկտիվացումը:

դ) Դործնականում և տեսության մեջ անողոք կերպով հարվածել աջ ու հաշտվողականության—ներ-կալիս գլխափոր վտանգի՝ կոնկրետ արտահայտությունները, չթուլացնելով հարվածը «ձախ» խոտո-րումների, տրամադրությունների և տրոցկիստական իդեոլոգիայի ռեցիդիվների գեմ:

1. ՀԱԿՑԻՄ Կենտկոմի Յ րդ պլենումն արձանա-գրում և, վոր հատկապես վերջին շրջանում համատա-րածի աշխատանքներում կուսակցության դիրեկտիվ-ներն իրազործելու համար կոմսոմոլն ունի զգալի նը-գանումներ (կոմսոմոլի նախաձեռնությամբ մի շարք կոլխոզների կազմակերպումը, ցուցաբերած ակտիվությունը կուլակի դեմ պայքարելու խնդրում, մի շարք շրջանների կազմակերպությունների  $100^{\circ}/\text{o}$ -ով կոլեկ-տիվացումը, կոմսոմոլի նախաձեռնությամբ 10 տրակ-տորներից բազկացած կոլոնացի կազմակերպում), յեր-կարատե և կարճատե ժամկետներով կոմյերիտական ըանբրիգադների մասսայական մոբիլիզացիան, գյու-ղերում գարնանացանի ոգտին մի շարք շաբաթորյակ-ների կազմակերպումն և այլն:

2. Զնայած կոլխոզ շարժման ասպարիզում ձեռք

բերած զգալի նվաճումներին, ՀԱԿՅԵՄ կհնակոմի Յ-ըդ  
պլենումը նշում ե, վոր դեռևս ԼԿՅԵՄ կազմակերպու-  
թլուններն անհրաժեշտ շրջադարձ չեն կատարել ի-  
րենց աշխատանքներում և ներկա իրենց աշխա-  
տանքների ձեռքով յետ են մնում զլուղատանտեսու-  
թլան զարգացման ընդհանուր վերելքից և կոլխոզ  
շարժման ներկա տեմպից: Պլենումը նշում ե, վոր  
կոլլեկտիվացման աշխատանքներում կոմսոմոլի կազ-  
մակերպութլան վորոշ ողակներում ցուցաբերվել են  
վորոշ անվճողականութլուն, պոչականութլուն, կու-  
լակին խնամակալություն (ինթակուլակություն),  
հաշտվողական վերաբերմունք դեպի դասակարգային  
թշնամին և այլն: Աջ գործելակերպի այս և նման  
կոնկրետ արտահայտությունների հանդեպ առանձին  
բջիջների կողմից դեռ չի տարվում բալլշեիլյան վըճ-  
ռական դիմ: Պլենումը նշում ե, վոր համատարածի  
շրջաններում կոլխոզների կազմակերպման գործում  
բջիջներն ընկնելով քանակի յետեից՝ հաճախ գործա-  
դրել են կոլլեկտիվներ կազմակերպելու կոնկուրսային  
մեթոդ՝ մոռացության տալով կազմակերպվելիք կոլ-  
խողի ամրապնդման խնդիրները:

3. Ցելնելով այս հիմնական թերություններից,  
կենտկոմի Յ-ըդ պլենումն առաջարկում է ՀԱԿՅԵՄ բո-  
լոր կազմակերպութլուններին անմիջապիս վճռական  
բեկում մտցնել կոմյերիտական աշխատանքներում,  
այն հաշվով, վոր միութենական աշխատանքների  
կենտրոնը զլուղում կազմեն կոլլեկտիվ անտեսու-  
թլունների շինարարության խնդիրները (կոլլեկտիվ-  
ների արտադրողականության բարձրացման, աշխա-  
տանքային դիսցիպլինալի ամրապնդման, սոցմքցման

և ինքնաքննադատության ծավալման խնդիրները), վերակադմելով գյուղական բջիջները կուլտուրներին կից:

